

## **Թրանսփարենսի Ինթերնեշնլի 2010 թ. Կոռուպցիայի ընկալման համաթիվը**

### **Հաճախակի տրվող հարցեր**

#### **Ի՞նչ է իրենից ներկայացնում Կոռուպցիայի ընկալման համաթիվը:**

Թրանսփարենսի Ինթերնեշնլի (ԹԻ) Կոռուպցիայի ընկալման համաթիվը (ԿԸՀ) դասակարգում է պետությունները/տարածքները՝ ելնելով նրանից, թե տվյալ պետության հանրային ոլորտը որքանով է ընկալվում կոռումպացված: ԿԸՀ-ն բաղադրյալ համաթիվ է, որը ստացվում է անկախ եւ իրենց բնագավառներում ճանաչում ունեցող հաստատությունների կողմից գործարարների եւ փորձագետների շրջանում անցկացված հարցումների՝ կոռուպցիային առնչվող տվյալների համադրությամբ: ԿԸՀ-ն արտացոլում է ողջ աշխարհում առկա կարծիքները, ներառյալ նաեւ այն փորձագետներին, ովքեր ապրում եւ աշխատում են գնահատվող պետություններում/տարածքներում: Որպեսզի պետությունը/տարածքը ընդգրկվի դասակարգման աղյուսակում, այն պետք է ներառված լինի ԿԸՀ աղբյուր հանդիսացող առնվազն երեք հարցումներում: Այսպիսով, տվյալ պետության ներառումը համաթվի աղյուսակում նշանակում է ոչ թե այն, որ այդ պետությունում առկա է կոռուպցիա, այլ միայն այն, որ այդտեղ առկա են կոռուպցիայի վերաբերյալ տվյալներ:

#### **Ինչպե՞ս է սահմանվում կոռուպցիան, եւ ինչպես է այն չափվում ԿԸՀ-ի միջոցով:**

Կոռուպցիան անձնական օգուտ ստանալու նպատակով պաշտոնյայի կողմից իրեն վստահված իշխանության չարաշահումն է: Սա ԹԻ-ի կողմից օգտագործվող աշխատանքային սահմանումն է, որը կիրառելի եւ՝ հանրային, եւ՝ մասնավոր ոլորտների համար: ԿԸՀ-ն արտացոլում է հանրային ոլորտի կոռուպցիան, կամ այն կոռուպցիան, որում ներգրավված են հանրային ոլորտի պաշտոնյաները, քաղաքացիական ծառայողները կամ քաղաքական գործիչները: ԿԸՀ-ն հաշվարկելու համար օգտագործվող հարցումները ներառում են այնպիսի հարցեր, որոնք վերաբերում են հանրային ոլորտում պաշտոնեական դիրքի չարաշահմանը: Այդ հարցերը վերաբերում են կոռուպցիայի այնպիսի դրսեւորումներին, ինչպիսիք են պետական պաշտոնյաներին կաշառելը, պետական գնումների գործընթացների ժամանակ պայմանագրային գումարի մի մասը մեջ-մեջ անելը (օտկատ), պետական միջոցներ յուրացնելը: Այդ հարցումներում ներառված են նաեւ հարցեր, որոնց միջոցով ստուգվում է տվյալ պետության հակակոռուպցիոն քաղաքականության ազդեցությունն ու արդյունավետությունը: Որպես այդպիսին, ԿԸՀ-ն ընդգրկում է կոռուպցիայի եւ՝ վարչական, եւ՝ քաղաքական ասպեկտները:

Գործարարների եւ փորձագետներ հարցումներից եւ գնահատումներից վերցված՝ կոռուպցիային առնչվող հարցերի հիման վրա յուրաքանչյուր պետության/տարածքի համար հաշվարկված արժեքները համակցվում են՝ ստանալու համար այդ պետության վերաբերյալ համաթվի ընդհանրական արժեքը:

#### **Ինչո՞ւ է ԿԸՀ-ն հիմնվում միայն ընկալման վրա:**

Կոռուպցիան ընդհանրապես իր մեջ ներառում է անօրինական գործունեության տեսակներ, որոնք հիմնականում բացահայտվում են սկանդալների, հետաքննությունների կամ քրեական հետապնդումների միջոցով: Հետեւաբար, փաստական նյութի հիման վրա դժվար է գնահատել տարբեր պետություններում կամ տարածքներում կոռուպցիայի բացարձակ մակարդակը: Այդ մակարդակը հաշվարկելու հնարավոր փորձերը, ինչպիսիք են, օրինակ, տարբեր միջոցներով վեր հանված կաշառակերության դեպքերի, կոռուպցիայի հետ

ուղղակիորեն կապված հարուցված քրեական գործերի կամ էլ դատական գործերի քանակների համեմատության միջոցով ստացված թվերը չեն կարող հանդիսանալ կոռուպցիայի մակարդակի միանշանակ ցուցանիշներ: Դրանք միայն արտացոլում են տվյալ պետության դատախազության, դատական մարմինների եւ/կամ զանգվածային լրատվամիջոցների կողմից կոռուպցիոն հանցագործությունների հետաքննման եւ վեր հանման արդյունավետությունը: Պետությունների համեմատելի տվյալների հավաքագրման վստահելի մեթոդ է հանդիսանում այն անձանց ընկալումների գրանցումը, որոնք ունակ են փորձագիտական գնահատական տալու տվյալ պետության հանրային ոլորտի կոռուպացվածության վերաբերյալ:

### **Ո՞ւմ կարծիքն է հաշվի առնվում ԿԸՀ հաշվարկման համար օգտագործվող հարցումներում:**

ԿԸՀ արժեքներում արտացոլված տեղեկատվությունը հիմնված է եւ՝ զարգացած արդյունաբերական, եւ՝ զարգացող երկրներում փորձագետների եւ գործարարների կողմից կոռուպցիոն գործելակերպի ըմբռնման վրա: ԿԸՀ հաշվարկման համար տվյալների աղբյուրներ են հանդիսացել վերը նշված փորձագետները եւ գործարարները, որոնք բնակվում են գնահատվող երկրում կամ նրանից դուրս: Կարելի է նշել այն հանգամանքը, որ տվյալ երկրում մշտապես բնակվող եւ նրանից դուրս բնակվող փորձագետների տեսակետները զգալիորեն համընկնում են:

### **Որո՞նք են ԿԸՀ հաշվարկման համար անհրաժեշտ տվյալների աղբյուրները:**

2010 թ. ԿԸՀ-ն հիմնված է 10 անկախ հաստատությունների կողմից անցկացված 13 տարբեր հարցումների վրա: 2010 թ. ԿԸՀ հաշվարկման համար օգտագործված տեղեկատվության աղբյուրները հրապարակվել են 2009 թ. հունվարից մինչեւ 2010 թ. սեպտեմբերը: Որպես աղբյուրներ ԿԸՀ-ն ներառում է միայն այն հարցումները, որոնցում ներկայացված է ուսումնասիրության մեջ ներառված պետությունների/տարածքների դասակարգում, եւ չափված են կոռուպցիայի մակարդակների որոշակի ասպեկտներ (օրինակ՝ կոռուպցիայի ընդհանուր տարածվածությունը): ԹԻ-ն երաշխավորում է օգտագործված աղբյուրների ամենաբարձր որակը եւ հարցումներ անցկացնողների բարեխղճությունը: Տվյալների հավաքագրման մեթոդաբանությունը պետք է լինի հրապարակված, եւ տվյալներն էլ պետք է լինեն լավ փաստագրված, որպեսզի հնարավոր լինի նրանց հուսալիության գնահատումը, եւ դրանք օգտագործվեն ԿԸՀ-ի հաշվարկի համար: ԿԸՀ հաշվարկելու համար օգտագործված հարցումների աղբյուրների ամբողջական ցուցակի, տրված հարցերի եւ հարցվողների թվի մանրամասների հետ ծանոթանալու համար այցելե՛ք <http://www.transparency.org/cpi> կայքի ԿԸՀ աղբյուրները բաժինը:

### **Ինչո՞ւ որոշ պետություններ/տարածքներ այլեւս ընդգրկված չեն ԿԸՀ 2010 թ. դասակարգման ցուցակում, եւ ինչո՞վ է պայմանավորված նոր պետությունների/տարածքների ներառումը ցուցակում:**

Պետությունները/տարածքները համաթվի դասակարգման աղյուսակի մեջ ընդգրկվում են միայն այն դեպքում, երբ ԿԸՀ հաշվարկելու համար ԹԻ-ի կողմից վստահություն վայելող տվյալների երեք եւ ավելի աղբյուրներ գնահատել են տվյալ պետությունը/տարածքը: Երբ տվյալ պետության դեպքում այդպիսի աղբյուրների թիվը երեքից պակաս է, ապա այդ պետությունը համաթվի աղյուսակում չի ընդգրկվում:

Հարցումների թվի կրճատման արդյունքում, 2010 թ. ԿԸՀ աղյուսակը ներառում է երկուսով պակաս պետություն, քան նախորդ տարվանը: Համաթվի այս տարվա աղյուսակում ներառվել է Կոսովոն, իսկ Սենթ Լյուսիան, Սենթ Վինսենթ եւ Գրենադիները, նաեւ Սուրինամը աղյուսակից դուրս են մնացել:

### **Կարելի՞ է, արդյոք, տվյալ պետության 2010 թ. ԿԸՀ արժեքը համեմատել այդ պետության նախորդ տարիների ԿԸՀ արժեքների հետ:**

ԿԸՀ համաթիվը հիմնված է պետությունների/տարածքների այնպիսի դասակարգման վրա, որը կազմվել է աղբյուր հանդիսացող հարցումների ժամանակի ընթացքում փոփոխվող հավաքածուների օգտագործմամբ: Հետեւաբար, ԿԸՀ-ն հարմար գործիք չէ երկարաժամկետ կտրվածքով համեմատություններ անցկացնելու համար:

Բացի այդ, սկսած 1995 թ.-ից, երբ ԿԸՀ դասակարգման աղյուսակն առաջին անգամ հրապարակվեց, աղբյուրների քանակը եւ աղյուսակում ներառված պետությունների թիվը ժամանակի ընթացքում անընդհատ փոփոխվում էր: Ավելացվել են աղբյուր հանդիսացող որոշ հարցումներ, որոշ այլ հարցումներ էլ այլեւս չեն օգտագործվում: Դասակարգման որակը բարելավելու նպատակով անցած 15 տարիների ընթացքում ԹԻ-ն նաեւ կատարել է ոչ էական փոփոխություններ համաթվի հաշվարկման մեթոդաբանության մեջ: Արդյունքում, ԿԸՀ-ն չի կարող օգտագործվել կոռուպցիայի ընկալման միտումների ճշգրիտ վերլուծության համար:

Տվյալների առանձին աղբյուրներ կարող են օգտագործվել՝ պարզելու համար, թե առկա է, արդյոք, տվյալ պետությունում ԿԸՀ նախորդ տարվա արժեքի հետ համեմատ կոռուպցիայի ընկալման մակարդակների փոփոխություն: ԹԻ-ն այս տարի կիրառեց այս մոտեցումը՝ գնահատելու դիտարկվող պետության առաջընթացը եւ սահմանեց այն չափանիշները, որոնց միջոցով կարելի է պարզել, թե կան, արդյոք, կոռուպցիայի ընկալման փոփոխություններ: Այդ չափանիշներն են.

ա/ առկա է ԿԸՀ արժեքի առնվազն 0.3 միավորի փոփոխություն, եւ

բ/ այդ փոփոխության ուղղվածությունը հաստատվում է դիտարկվող պետության համար օգտագործված տվյալների աղբյուրների կեսից ավելի կողմից:

Հիմնվելով այս չափանիշների վրա՝ 2009 թ. համեմատ 2010 թ. առաջընթաց են արձանագրել Բութանը, Չիլին, Էկվադորը, Մակեդոնիան, Գամբիան, Հայիթին, Ճամայկան, Քուվեյթը եւ Քաթարը: Հետընթաց արձանագրածն պետություններն են Չեխիան, Հունաստանը, Հունգարիան, Իտալիան, Մադագասկարը, Նիգերը եւ ԱՄՆ-ը:

#### **Ո՞րն է ավելի կարելու՝ պետության/տարածքի զբաղեցրած տեղը ԿԸՀ դասակարգման մեջ, թե նրա ԿԸՀ արժեքը:**

Պետության/տարածքի ԿԸՀ արժեքը (որը գտնվում է 0-ից 10 արժեքների տիրույթում) ցույց է տալիս պետության հանրային ոլորտում կոռուպցիայի ընկալված մակարդակը, իսկ պետության զբաղեցրած տեղը ԿԸՀ դասակարգման աղյուսակում՝ ցույց է տալիս նրա դիրքը դասակարգման մեջ ներառված այլ պետությունների նկատմամբ: Կարելու է նկատի ունենալ այն, որ պետության զբաղեցրած տեղը ԿԸՀ դասակարգման աղյուսակում կարող փոփոխվել պարզապես այն պատճառով, որ այդ աղյուսակում հայտնվում են նոր պետություններ կամ նախկին պետություններից մի քանիսը դուրս են մնում աղյուսակից:

#### **ԿԸՀ ամենացածր արժեք ունեցող պետությունը/տարածքը հանդիսանում է արդյոք աշխարհի ամենակոռումպացված պետությունը:**

Ոչ: ԿԸՀ ամենացածր արժեք ունեցող պետությունը/տարածքը այն պետությունը/տարածքն է, որում հանրային ոլորտում կոռուպցիայի մակարդակն ընկալվում է որպես ամենաբարձրը *ԿԸՀ աղյուսակում ընդգրկված պետությունների/տարածքների մեջ*: Ներկայումս աշխարհում կա 200-ից ավելի անկախ պետություն, իսկ 2010 թ. ԿԸՀ դասակարգման աղյուսակում ներառված է նրանցից 178-ը: ԿԸՀ-ն ոչ մի տեղեկություն չի տալիս այն պետությունների/տարածքների վերաբերյալ, որոնք այդ աղյուսակում ընդգրկված չեն: Ավելին, ԿԸՀ-ն վարչական եւ քաղաքական կոռուպցիայի ընկալման գնահատականն է: Այն չի հանդիսանում մի ողջ պետության կամ հասարակության կոռումպացվածության եւ այդ պետության արտաքին քաղաքականության կամ գործունեության վերաբերյալ դատավճիռ: ԿԸՀ դասակարգման ստորին հորիզոնականներում գտնվող պետությունների հասարակությունները նույնքան մտահոգ են նաեւ նույնքան քննդատական կոռուպցիայի նկատմամբ, ինչ վերին հորիզոնականներում գտնվող պետությունների/տարածքների հասարակությունները: Սրա վերաբերյալ ավելի մանրամասն տեղեկությունների համար տե՛ս ԹԻ-ի Կոռուպցիայի համաշխարհային բարոմետրը:

#### **Կոռուպցիայի վերլուծությանն առնչվող ի՞նչ այլ ուսումնասիրություններ է իրականացնում ԹԻ-ն:**

ԹԻ-ն իրականացնում է կոռուպցիայի անկախ էմպիրիկ ուսումնասիրություն: Համաշխարհային ընդգրկում ունեցող ուսումնասիրությունների մեր փաթեթը ներառում է քանակական եւ որակական մոտեցումներ,

մակրոմակարդակի ցուցանիշներ եւ խորքային ախտորոշում, փորձագիտական վերլուծություն եւ փորձ, ինչպես նաեւ ընկալման վրա հիմնված հարցումներ: Ուսումնասիրությունների այս ամբողջությունը տալիս է ամբողջ աշխարհում կոռուպցիայի մասշտաբների, տարածվածության եւ դինամիկայի պատկերը: Այն ծառայում է նաեւ մոբիլիզացնելու եւ աջակցելու համար փաստերի վրա հիմնված եւ արդյունավետ քաղաքական բարեփոխումները: Բացի Կոռուպցիայի ընկալման համաթվից ԹԻ-ի համաշխարհային հետազոտության փաթեթը ներառում է նաեւ.

- **Կոռուպցիայի համաշխարհային բարոմետր (ԿՅԲ).** աշխարհի ավելի քան 65 պետությունների ավելի քան 70,000 տնային տնտեսությունների ներկայացուցչական հարցում մարդկանց՝ կոռուպցիայի ընկալման եւ փորձի վերաբերյալ: Կոռուպցիայի համաշխարհային բարոմետրի վերաբերյալ վերջին տվյալները կարելի գտնել [http://www.transparency.org/policy\\_research/surveys\\_indices/gcb](http://www.transparency.org/policy_research/surveys_indices/gcb) հասցեում:
- **Կաշառք վճարողների համաթիվ (ԿՎՅ).** առաջատար արտահանող պետությունների դասակարգումն ըստ իրենց ընկերությունների կողմից արտասահմանում պաշտոնյաներին կաշառելու երեւոյթի ընկալման հավանականության: Այն հիմնված է պաշտոնյաների հարցման վրա, եւ նրա ուշադրության կենտրոնում է արտասահմանյան ընկերությունների գործունեությունը այդ պաշտոնյաների երկրներում: Կաշառք վերցնողների համաթվի վերաբերյալ վերջին տվյալները կարելի գտնել [http://www.transparency.org/policy\\_research/surveys\\_indices/bpi](http://www.transparency.org/policy_research/surveys_indices/bpi) հասցեում:
- **Կոռուպցիայի համաշխարհային զեկույց (ԿՅԶ).** թեմատիկ զեկույց, որն ուսումնասիրում է կոռուպցիան՝ կապված առանձին ոլորտի կամ կառավարման հիմնախնդրի հետ: Ջեկույցը պարունակում է փորձագիտական ուսումնասիրություններ եւ վերլուծություն, ինչպես նաեւ առանձին դեպքերի ուսումնասիրություններ: Կոռուպցիայի համաշխարհային վերջին զեկույցը հրապարակվել է 2009 թ. սեպտեմբերի 23-ին այն կարելի է գտնել <http://www.transparency.org/publications/gcr> հասցեում:
- **Օրինավորության ազգային համակարգի (ՕԱՅ) գնահատում.** տվյալ պետության վերաբերյալ կատարվող ուսումնասիրությունների շարք, որը տալիս է այդ պետության արդյունավետ կառավարում եւ օրինականությունն ապահովող առանցքային հաստատությունների (օրենսդիր, գործադիր եւ դատական իշխանություններ, հակակոռուպցիոն մարմիններ եւ այլն) ուժեղ եւ թույլ կողմերը: Ջեկույցների ողջ ցանկին ծանոթանալու եւ Օրինավորության ազգային համակարգի մոդելի մասին ավելի շատ տեղեկատվության համար տե՛ս [http://www.transparency.org/policy\\_research/nis](http://www.transparency.org/policy_research/nis)